

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԴՈՒՐՅԱՆ ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԸ ՆՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՎԱՂԴԷՆ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՂԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՔՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՈՂՋՈ՞ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻ՞ՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՑ, ՍԱՐԿԱՒԱԳԱՅ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

Ուրախ է մեր Ս. Եկեղեցին, ուրախ է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որ Կոստանդնուպոլսո Ամենապատիվ Պատրիարք Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի գլխավորությամբ, հորելյանական հանդիսություններով կնշվի Արմաշի դպրեվանուց նախկին վանահայր և վերատեսուչ, Կոստանդնուպոլսո և Երուսաղեմի պատրիարք երջանկահիշատակ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի ծննդյան հարյուրամյակը:

Հոգելույս Դուրյան Սրբազան իր առաքինազարդ հոգիով, իր բովանդակ կյանքով ու վաստակով, Հայ Եկեղեցիի և հայ ժողովուրդի հանդեպ ունեցած իր խորունկ սիրով և մեծ նվիրումով, աներեր կանգնած է մեր՝ շնորհներով լեցուն հայրապետներու լուսափաղանգին մեջ և հավետ կենդանի պիտի մնա անոր հաղցր հիշատակը՝ որպես Աստուծո շունչը կրող ընտիր անոթ, որպես քարոզիչ, բանաստեղծ և լեզվագետ, որպես տեսլապաշտ մտածող և մեծ բարոյախոս. «ՄԱՀԿԱՆԱՑՈՒ ԾՆԵԱԼ՝ ԱՆՄԱՀ ՁԻՒՐՆ ՅԻՇԱՏԱԿ ԵԹՈՂ, ՊԱՏՈՒԵԱՑ ԶՊԱՏԿԵՐՆ, ՊԱՏԿԱՌԵԱՑ Ի ԿՈՉՆԱԿԱՆԷՆ, ՓՈԽԱՆՈՐԴԵԱՑ ԶԿԵԱՆՍ» (Խորենացի):

Սկյուտարցի, համեստ արհեստավորի բնտանիքի մը ծոցին մեջ ծնած, ան հոգիով անեցավ և բարձրացավ ու գիտցավ իր կյանքը վերածել վսեմ առաքելության մը, դառնալով ԺԹ դարու մեր ազգային-եկեղեցական զարթոնքի ինքնատիպ և անկրկնելի մեծությունեներեն մին:

Դուրյան Սրբազան ավելի քան կես դար ուսավ և ուսույց, աղոթեց ու գրեց, դասախոսեց, դաստիարակեց և քարոզեց ու իր պաշտոնը փառավորեց սրտեռանդ նվիրումի մը բարի արդյունավորությամբ. «ԳԵՐԱԶԱՆՑԵԱԼ ՔԱՆ ԶԱՄԵՆԱՅՆ, ՈՅՔ ԶԱՅՆՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՒ ԷԻՆ ԱՌԱՔԻՆԻՔ» (Խորենացի):

Դուրյան Սրբազան մեծ էր նաև որպես հոգևոր-բարոյական բարձր նկարագիր: Անոր մաքրամաքուր անձնավորության հմայքը, սրտի քաղցրությունը և ջերմությունը քանի՜-քանի սերունդներու համար եղան հոգեկան սնունդի շտեմարան և լույսի աղբյուր:

Եղիշե արքեպիսկոպոս Դուրյան մեր օրերու Շնորհալին եղավ, սիրված, հարգված բոլորեն:

Աստվածաշնչեն Ս. էջմիածնեն և Մեր սրտեն օրհնություն, օրհնությո՜ւն և լո՜ւյս իր պայծառ հիշատակին: Թող անքառամ մնա իր դափնեպսակը այժմ և միշտ, և թող Տերը արժանավոր հաջորդներ պարգևե մեր Ս. եկեղեցիին, ի փառս հավատավոր Հայոց Ազգին:

Արդ, սիրելի՛ Մեր, «ԽՈՍՏՈՎԱՆ ԵՂԵՐՈՒՔ ՅԻՇԱՏԱԿԻ ՍՐԲՈՒԹԵԱՆ ՆՈՐԱ» (Սաղմ. ՂԶ 12) և «ԱՍՏՈՒԱԾ ՅՈՒՍՈՅ ԼԻ ԱՐԱՍՑԷ ԶՁԵԶ ԱՄԵՆԱՅՆ ԽՆԴՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ, ԱՌԱՒԵԼՈՒԼ ԶԵԶ ՅՈՒՍՈՎ ՁՕՐՈՒԹԵԱՄԲ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ» (Հռոմ. ԺԵ 13):

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 10-ն յուլիսի
1959 Քրիստական ամի,
և ի տուամարիս Հայոց ՌՆԹ,
ի վանս Սրբոյ էջմիածնի: